

Թոյլ է տալիս, մի պաշտօնական մարդուն անպայել ձեռով կասկած գցել Մուշկի գործ- ված թղթակցութեան վրայ, ակնարկելով, որ նա Թիֆլիսում է հնարված:

Դուք, պ. հիւպատոս, շատ ծանր պա- տասխանատուութիւն էք վերցնում ձեզ վրայ: Մշակը՝ չէ պատկանում այն փողո- ցային թերթերին, որտեղ դուք ստիպել էք ստեր կարգալ և գովասանքներ տպագրել օսմանցիներին հասցէին:

Յիշեցէք այդ ճշմարտութիւնը և բարե- հաճեցէք միւս անգամ հետեւ մնալ այդ տեսակ խօսքերից, եթէ չէք կամենում, որ ձեր հերքումը խմբագրական գամբիւրն ընկնի:

«ՄԵՆ ԾԵՐՈՒՆՈՒ» ՆԱՄԱԿԸ

Խալիլ-խալիլ անունով մի թիւրքապատակ դիմեց Գաղաթօնին մի նամակով, որի մէջ նա մեղադրում է նախկին պրէսիէրին նրանում, որ նա հայոց հարցի առիթով իր արտասանած վեր- ջին ճառի մէջ, իր պաշտպանութեան տակ առ- նելով քրիստոնեայ հայերին, վերաբերվեց առանց որ և է խղճահարութեան և մինչև անգամ կա- խալկայ թշնամութեամբ դէպի թիւրքերը միայն նրա համար, որ նրանք մասնագիտութիւն են դառնում: Մի այդպիսի գործողութեան եղանակ նամակի հեղինակը անուանում է անարժան մեծ մարդու անունը:

Գաղաթօն պատասխանեց հետեւալ նամակով: «Պարոն. Ես կատարելապէս հերքում եմ ձեր ինձ վրա բարդած մեղադրանքը, իբրեւ հաստի- լութեամբ կամ թշնամութեամբ եմ վերաբերվում դէպի թիւրքերը: Ես կատարելապէս հաւատացած եմ, որ դուք անկեղծ էք գրում, բայց ձեր հաղորդած փաստերը ճիշդ չեն, այն ինչ ես հիմնվում եմ իսկական փաստերի վրա:

«Ես չեմ մեղադրում բոլոր թիւրքերին ընդ- հանրապէս, այլ միայն թիւրքաց կառավարու- թիւնը: Ես մեղադրում եմ նրան այն բանում, ինչ բանի մէջ նրա յանցանքը վկայված է հրա- պարակալէս: Իմ կարծիքով, ես Օսմանեան կայ- սրութեան աւելի լաւ բարեկամն էի, քան սուլ- թանը և նրա խորհրդակցները:

«Ես միշտ խորհուրդ էի տալիս Թիւրքիային հնորէն իր հպատակ ազգերին տեղական ինքնա- վարութեան խելացի իրաւունքներ, որոնք կը փրկէին Թիւրքիան սարսափելի կորուսանքներից: Այդ բարի խորհուրդը մերժվեց, և Թիւրքիան զրկվեց 18,000,000 ազգաբնակչութիւնից և կարող է դեռ էլի կորցնել: Խնդրում եմ, կշռեցէք այդ խօսքերը:

«Ձեզ անկեղծ բարիք ցանկացող՝
Վ. Գլադստօն»

որ պարլամենտի որոշ ակտի թելադրութեամբ մինչ օրոշել ենք վերացնել մի չարիք և առա- ջարկում ենք մեր միջոցը համայնքների ժողո- վին կամ կառավարութեան: Եւ յանկարծ նրանք մեզ պատասխանում են, «Ոչ, ոչ, ձեր պահանջը շատ փոքր է, միայն այդ օրէնքը չէ, որ պակասում է մեր երկրին»: Դա օտարոտի և հրէշաւոր է թվում մեզ, բայց այդպիսի դատարկաբանութիւններով է կերակրում մեզ օսմանեան կառավարութիւնը ամեն անգամ, երբ նեղն է ընկնում և միջոցներ է որոնում իրան արգարացնելու, ինչպէս այդ այսօր տեղի ունի:

«Այս առաջին թիւրքական յայտարարութեա- նը հետևում է երկրորդը, որ յայտնի եղաւ մի երկու օր սրանից առաջ: Թիւրքիան մերժում է Հայաստանի բէֆօրմիներ ծրագրերը, բայց համաձայն է զինաթիփ անել քրիւրքերին: Գիցուք դուք հաւա- նեցիք այդ բանը և ասացիք, «Եւ, մենք չենք կարող մեր բոլոր ցանկացածը իրադարձել, ու- ռենի բաւականամանք մի մասով. քրիւրքերի զի- նաթիփութիւնը բոլորը չէ, բայց կարեւոր է, ու- ռենի կարող ենք ներկայանալ զիջել եւրօպական կօնտրօլը»: Սակայն տեսնենք, ինչ կը լինի հե- տեանքը: Գուցէ մի յիշան կամ հարկւր քիւրդ կը զինաթիփվեն, բայց նրանց զէնքերը կը յանձն- վին ուրիշներին, աւելի կատաղներին, քան ա- ռաջիներին էին (հաւանութիւն): Իմ կարծիքն այն է, որ օսմանեան կառավարութիւնը ինքը շատ լաւ է հասկանում, որ բանը խոտանալու մէջը չէ, այլ նրանց կատարելու երաշխաւորու- թեան, գարանտիայի մէջ (հաւանութիւն):

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀՆԻ ՆԻ ՆՈՐԻ ՄԱՐԱՌՈՒՄԸ

IV

Մենք տեսնք, որ հանձարեղ անհատներին նոր գաղափարները կենսունակ ժողովուրդներին մէջ վաղ թէ ուշ ընդունելութիւն են գտնում, եթէ իրանց հիմքում ունեն թարգմանական նպատակ տարրեր, տեսնք, որ հին, անարդար գաղա- փարների վրա հիմնված կարգերի պաշտպան լի- նում են ժողովուրդի միջին տիպից ստոր կանգ- նած ապուշները, յանցաւորները և հոգով դառա- մեալները, կամ հին կարգերի մէջ անձնակա- ն ստոր շահ գտնող պարագիտ ինտելիգեն- ճեանք, որ նոր, առաջադիմական գաղափարնե- րի իրականացումը պահանջում է անհատների կողմից զոհաբերութիւն և ժողովուրդի կողմից հե- ռուսական ջանքեր. որ ժողովուրդի բարօրութիւնը կախված է աշխարհակա- ն գործունեւից, իսկ հոգեւորականութիւնը, լաւագոյն դեպքում միայն կոչված է ժողովուրդի պահանջներին յարմարվել նրա կամքը կատարել, լինել նրա հաւատա- րի մ սոցիալաւորը և ոչ ահալ կամ իշխողը:

Մենք տեսնք, որ երբ ժողովուրդը հասել է ինքնաճանաչութեան և այլ եւ չէ կարողանում տանել հին կարգերը և անում է արդար նոր պահանջներ, բայց նրանք, որոնց ձեռքում ապո- ղէն կերպով կենտրոնացել է բռնակալական իշ- խանութիւնը, ոչ միայն չեն լսում բողոքի ձայ- նը, այլ և ամեն հնարներ են գործ դնում խեղ- ղելու, մեղցիւրով ժողովուրդի գիտակցութիւնը, որպէս զի նրան պահեն հին, ստորեցուցիչ դը- րութեան մէջ:—այն ժամանակ առաջ է դալիս իր աւելի ինտելիգեն- և ստիպողութեան անհրաժեշտութիւնը:

Շատ հասկանալի է, որ միմիայն կրօնական կամ բարոյագիտական չափերը (նորմաները) բաւա- կան չեն մարդկանց փոխադարձ յարաբերութեան համար հանրակենցաղի մէջ. այդ նորմաները անորոշ են, առաձգական, շատ անգամ քմահաճ և սուբիեկտիվ: Անհատի անձը, պատկեր և գոյքը կառավարութիւններից ազատելու համար հարկա- ւոր են աւելի որոշ, ճիշդ գծագրված սահմաննե- րով չափեր, որոնք կոչվում են իրաւաբանա- կան նօրմաներ. դրանք են որոշում իրա-ւ ունքը, որի առանձնապատկերները կրօնա- բարոյագիտական չափերի հէց ստիպողակա- նութեան մէջ է կայանում:

Ինչ օգուտ գրկվածի համար, եթէ ուկէ տա- ունով գրկած լինեն այնպիսի չափեր, որոնք, ի- բրկանութեան մէջ մեռած տառ մնալով և ոչ մէկ համար պարտադիր չը լինելով՝ երբեք չեն կարող պաշտպանել նրա նկատմամբ արդարու- թիւնը և զուգը ունեղի անիրաւութիւնը: Այդ գրկվածը միայն այն ժամանակ կարող է աւել, թէ ինքը սարուկ չէ, այլ իրաւունք

«Այսօր, պարոններ, ես կարդացի «Manchester Guardian» թերթում—չը գիտեմ ուրիշ թերթե- րում էլ կայ թէ ոչ—որ պետութիւնները զարա- ցած թիւրքիայի ճարտիկութիւններից՝ վճռել են վերջ դնել այս երկար ձգձգվող հարցին (հաւանութիւն): Նրանք ամենայն իրաւամբ և լիազօրութեամբ ուղարկելու են Հայաստան մի կօմիսար, տալով նրան իրաւունք կառավարել երկիրը սուլթանի անունից: Այդ անձը, որ հա- ւանութիւն է գտել մեծ պետութիւնների կողմից, ոչ անպիտան է և ոչ մէկ այն ազգութիւններից, որոնք աւելի ջերմ համակրութիւն ունեն դէպի թիւրքիայի քրիստոնեաները. դա Ֆօն Կալայն է, որին յանձնված էր Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ բարենորոգութիւններ մտցնելու դժուարին գործը, որ նա կատարեց այնքան աջողութեամբ և սլատով: Նա ունեւարացի է: Ունեւարացի- րին չէ կարելի կասկածել, որ նրանք միայն ըրի- տանեաներին կը համակրեն թիւրքիայում: Նա մի անձնաւորութիւն է, որ հասկանում է իր արածը և անելքը, և մենք մեր կողմից չենք կարող մի աւելի բաւարար ճանապարհ ցոյց տալ գործերի լաւ ընթացքի համար:

«Տիկիններ և պարոններ, ես լիազօրու- թիւն չունեմ ձեզ հաւատացնելու, որ իմ խօսքերը համապատասխան են իրականութեան, բայց ես կը խնդրեի Աստուծոյ, որ նրանք այդպէս լի- նեն: «Manchester Guardian» լրագրող իր կողմից յատկապէս նկատում է, որ դա չափազանց լաւ է, ուստի կասկածելի է, որ ճիշդ լինի: Սակայն, ինչպէս և իցէ, մենք չունենք ստույգ տեղեկութիւններ և

ունեցող մարդ, եթէ նա դիւրին միջոցներ ունե- նայ ստիպելու, որ ճանաչեն իր արդար իրա-ւունքները:

Իրաւունքի արտայայտութեան ամենակատա- րեալ ձևերը համարվում են ժողովուրդի ընտրած ներկայացուցիչների ընտրութեան բովից անցած, նրանից ընդունված և պետական օրինաւոր իշ- խանութիւնից հաստատված այն իրաւաբանական չափերը, որոնք կոչվում են օրէնք:

Իրաւունքը, իբրև անխիւ և իրար հետ ընդ- հարկող բազմազան կենսական շահերի երկար և ծանր մաքսուման արդարեւ—պահապան է այդ շահերի: Եթէ մի կամ մի քանի անհատների ըը- մահաճութիւնը օրէնք յայտարարվի՝ այն ժառա- նակ ի նկատի առնված կը լինեն մէկի, կամ մի քանիսի շահերը և ոչ ընդհանուր: Օրէնքը և հասարակական կարգերը, զերգարուհասական կամ գիտական ստեղծագործութիւն չեն, որ կախ- ված լինեն մի ձայնից, անհատական ու թիւի- նից, այլ ընդհանուրի շահերին վերաբերեալ կենսական խնդիրներ. ուրեմն նախ քան պար- տադիր լինեն՝ նրանք պէտք է հասարակական կարծիքի, ընդհանրութեան հանդիմադրի արդիւնք հանդիսանան: Այլապէս բռնութիւն է գործադը- վում, անիրաւ ճնշումներ, որոնց ստակալի օրի- նակները ներկայացնում են արեւելեան եր- կիրներ թէ թէ աշխարհական և թէ հոգեւոր կա-ռավարութիւնները և մասնաւորապէս Թիւրքիան:

Իւրաքանչիւր անհատի համար, օրինակ, ha- beas corpus-ը ամենատարրական իրաւունք է. արդարադատութիւնը պէտք է ապահովի նրա անձը, պատիւը և զուրքը բռնութիւնից և կամա- յակնութիւնից: Ուրեմն կառավարութեան կաղ- թութիւնը պէտք է գոհացնի մարդու այդ տար- րական պահանջները:

Եթէ մէկը ունենալով այդպիսի իրաւունք, չու- գէնայ օգուտ վէլ նրանից և իր յօթար կառնով գիտակցաբար, թողնի՝ որ անիրաւութիւններ կա- տարվեն իր նկատմամբ—այդ արդէն իր գործն է, թող ինքը տուժի. այդ դէպքում ասում են ի- րաւաբանները, volenti non fit injuria (յօթար- վողին անիրաւութիւն չէ անվում):

Այդպիսի ստույգութեամբ չէ կարելի վերաբը- վել, երբ անհատը, կամ ժողովուրդը հասած են ինքնաճանաչութեան, խեղդվում են անիրաւու- թիւնից և, բողոքելով, իրաւունք են պահանջում, իսկ նրանց ստիպում են տանել արեւելեան կա- մայականութեան ամենախայտառակ կարգերը:

Ճիշդ է, մի խաւար, անշարժ և ստրկանդի ժողովուրդ կարող է այնչափ բլթացած լինել, որ ձաւկատալ արակա- ն անհրաժեշտութիւն, նոյն իսկ նուազ արագ ծո- թիւն համարի ենթարկ- վել աշխարհական կամ կրօնական բռնաւորների ջմահաճութեան, իմաստութիւն համարել նրանց գլխից դուրս եկած ամեն մի յիմարութիւն և սուտ, բարեգործութեան անուն սալ նրանց կըը-

երի մեր կառավարութիւնը տախտի իրաւունք չէ համարում և պարտաւոր չէ զգում իրան տալու իսկական տեղեկութիւններ:

«Երկար ժամանակ մեզ անտեղեկակ էին թող- նում այդ բաներից: Ես հաւատացած եմ, թէ ե- չը գիտեմ, որ անցեալ կառավարութիւնը ու- նէր բաւական հիմունքներ թագնելու դրանց: Ես կարծում եմ, որ դեռ չէ հասել ժամանա- կը, երբ կարելի կը լինի դատողութիւններ անել այս հարցի մասին: Եւ այժմ մենք չունենք տե- ղեկութիւններ, որոնց վրա վերջնականապէս հիմնվէինք, յամենայն դէպս, ես կարծում եմ, կան յայտնի իրողութիւններ, նման այսօրվայ մեր նկատածներին և ուրիշ ձևով արտայայտվածնե- լին, որոնք բոլորովին իրաւունք են տալիս մեզ որոշումներ կայացնել: Եւ այժմ, ինչ ես պէտք է ասեմ, այն է, որ ներկայ գործը կարելի է ամփոփել երեք կարճ նախադասութեան մէջ: Եւ չը գի- տեմ այդ նախադասութեաններից որին պէտք է տալ աւելի կամ պակաս նշանակութիւն: Ինձ թը- վում է, որ նրանցից իւրաքանչիւրը բացառապէս անհրաժեշտ է: Առաջին նախադասութիւնը այս է, դուք պէտք է չափաւորեք ձեր պահանջները: Դուք պէտք է միայն այն խնդրեք, որ ամենամա- հրաժեշտն է և ըստ կարելոյն համաձայն է սրա- նից առաջ եղած առաջարկութիւններին: Եւ չեմ աստանվում ասելու, տիկիներ և պարոններ, որ ամենապարզ և ամենալաւ միջոցը այս գործում, եթէ կարողանայիք իրադրօնել, կը լինէր ասել թիւրքերին, որ նա դուրս գնայ Հայաստանից (բարձ- րաձայն հաւանութիւն): Նա իրաւունք չունի այդ-

քերից և մարտիկաններից յառաջացած չարադը- ծութիւններին, բայց այդ դէպքում էլ չէ կարելի ասել՝ volenti non fit injuria, որովհետեւ անգի- տակցաբար, չը հասկանալով է նա այդպէս անում: Երեւան չէ ըմբռնում, երբ իրան հարա- տահարում են, դարեւրով բռնութեան և ֆանա- տիկանութեան միջոցաւրում ապրող ժողովուրդն էլ նոյն կերպ է վերաբերվում: Արդարութիւնը պահանջում է, որ հակադրող ուժով միջամտի և աղաթի նրանց այդ խայտառակ վիճակից և հը- նարաւոր դարձնի նրանց համար՝ ազատ օգտվե- լու լոյսի և իրաւունքի բարիքներից: Բայց միան- գամայն ոճրագործութիւն է, երբ գիտակցու- թեան հասածին տանջանքների են ենթարկում, ստիպում են մեռնել, այրվելով բռնութեան ձեռքով վառված դանդաղ կրակի մէջ, պատի- րում են զօռով մնալ այդ դրութեան մէջ, որը անտանելի է:

Մի ժողովուրդ երկար տանջանքներից յետոյ, սեփական ջանքերով մկրտվելով լոյս և իրա-ւունք բերող քաղաքակրթական գաղափարների առաջնում, հասնում է ինքնաճանաչութեան, բո- ղոքելու քաջութիւն ունի, զոհվելու պատրաս- տութիւն, բայց ինքն, մենակ իր թոյլ ոյժերով, անկարող է ստիպել, որ գաղանափաւ բռնաւորը յարցի մարդկային իրաւունքը, միթէ այդ դէպ- քում մի աւելի և աւելի բողոքաւոր վիճակ ու- նեցող ազգ կամ աշտրուկաւ անհատներ, առանց կրօնի և ազգի խտրութեան, բարոյապէս պար- տաւոր չեն օգնութեան ձեռք մեկնել, ստիպողա- կան միջոցների դիմել: Միթէ դրանց, իբրև կա- տարեալ մարդկանց, տանջանք չեն պատճա- ռում աչքի առաջ կատարվող գաղանափութիւնները, բռնաբարութիւնները և սպանութիւնները:

Խալ եթէ այդ այդպէս է, եթէ նրանք էլ տանջ- վում են, ուրեմն և իրաւունք ունեն պահան- ջել, որ վերջ դնվի իրանց տանջանքները պատ- ճառող երկույթներին: Եթէ զիսլմամբ կամ ե- ղուիտը, մանր մանր հաշիւներ ի նկատի ունե- նալով, ձեռնադրութեամբ և ստանալաւորութեամբ դիտում է այդ բոլորը՝ իր իրաւունքը չը հա- մարելով միջամտել, երբ անհրաժեշտ իրաւունք- րով համոզված է անիրաւութեան մէջ,—նա այդ- պէս անում է, որովհետեւ նա կատարեալ և մարդ- չէ, զարգացած հոգեկան պահանջներով: Բռնու- թիւնը չարիք է, լինի նա սեփական, թէ օտար, աշխարհական թէ հոգեւորական, անհատական թէ մասային, և ազնիւ, կատարեալ մարդը ամեն բռնութեան դէմ պէտք է թէ բողոքի և թէ մա- ջաւու:

I.

ՆԱՄԱԿ ԽՍՐԱՎՐՈՒԹԵԱՆ

Մ ուշ, յունիսի 10-ին

Աստուծո-Ցալորիկի աղետալի, ամենապատալի և արտաճախիկ անցքերն, քառասունէ աւելի զիւղե-

տեղ մնալու: Եւ դա կը լինէր հարցի գեղեցիկ լուծումը: Բայց ոչ մի կերպ մենք հաւատարմացած չենք, որ Եւրօպան, կամ նոյն իսկ երեք պետու- թիւնները կը համաձայնվեն այդպիսի մի որոշման վերաբերմամբ: Ուստի թոյլ տուէք խօսել միայն այն բանի վրա, որ անհրաժեշտ է:

«Այժմ անցնենք միւս երկու նախադասութիւն- ներին, որոնցից առաջինը այն է, որ դուք չը պէտք է ընդունէք ոչ մի թիւրքական խոտան- (սեղեք, լսեցէք): Նրանք բոլորովին և բացառա- պէս գուրկ են որ և է արժեքից: Նոյն իսկ աւե- լի վատ, քան զուրկ արժեքից, որովհետեւ նը- րանք կարող են խաբել մի քանի մարդկանց, ո- ռոնք գործին անտեղեկակ և անփորձ լինելով՝ ըը- նակամաբար կարող են ենթադրել, թէ երբ որ և է խոտաններ արվում են, ցանկութիւն կարող է լինել մի բան գտնել իրադրօնել: Ունե- ցեք ի նկատի, որ ոչ մի ծրագրի արժեք չունի, եթէ նա չէ հիմնված էական երաշխաւորութեան վրա, բոլորովին անկախ թիւրքաց կառավա- րութեան խոտաններից (ծախահարութիւններ):

«Միւս խօսքը, որ ես պէտք է ասեմ, այս է. մի սարսափէք մի բառից, որ ես պէտք է մտցնեմ իմ ներկայ ճառի մէջ, մի բառ, որ սովորական հանգամանքներում պէտք է վառված լինէր դիւր- լօմաթիփական գործադրութեան մէջ, այն է՝ ստիպողութիւն բառը: Ստիպումն մի բառ է, որ լաւ հասկացվում է Կ. Պօլսոն, մի բառ, որ մեծապէս գնահատվում է Կ. Պօլսոն: Դա մի ազգու դեղ է, որ երբեք չէ սխալվում ներգործութեան կողմից, երբ այնտեղ է գոր-

բու աշխատանքներ լինեն, գոյից, ընչից և անասնոց
գրառուիլը ու թաղանթիլը և կոտորածէն զերծ
մնացող այդ վատաբաղդիկներու ի սիրտս աշ-
խարհի մարտնչականութեան համար թափառաշը-
ջիւն համայն ազգայնոց յայտ է արդէն:

Որչափ կարելի էր, Մշտ քաղաքացիք և զիւրա-
ցիւններն ապաստան և սրբէն տալով ցարդ օդ-
նութեան հասան. բայց մէջցիւր ևս ոչ նուազ վի-
ճակակից են գաւառացիներուն, ուստի անհնար
է օգնութեան ալ ևս հասնիլ ու փրկել սովա-
մահ կորսնչէն: Այդ անտուն, անտէր, անսպաս-
պար և զրկեալ ամենաթշուառները:

Հետեանքն բնականաբար մահ սիրտ լինէր սո-
վեալներուն, որք միանգամայն կրած էին մե-
կութիւն և անպատասպարան մնալու դժուակ
ազդեցութիւնը: Ներքիակ ցուցակն աւելի սեր-
ճախօս պիտի լինի, յորում նշանակուած են բը-
նականաբար անցարմարութեան և անօթութեան
սովեմահ կորսնչողներն (մեկ ի պաշտօնէ հաղոր-
դուած) և թէ որչափներ կան զեռ անպատ:

Արդ՝ նկատելով այդ խեղճերու ամենադառն
կացութիւնը, նկատելով մէջցիկներու օգնութեան
հասնելու անբաւական և անձեռնհաս գտնուիլը
և, որ առաւելագոյն է, նկատելով որ նօթութիւն
սկսած է իր զօններն ունենալ, կուգամք հրաւեր
կարող համազգայնօրէն, յանուն կրօնի բարե-
պաշտական զգացմանց, յանուն մարդասիրութեան
և յանուն ազգութեան օգնութեան հասնել Սա-
սուն-Տաւրիկից կոտորածէ զերծ մնացած մա-
համերձ թշուառներու, և կը խնդրեմք որ ձեր
պատուական օրակարգի պատուական էջերուն
մէջ հրաւեր կարգաբ մեր մարդասիր ազգայնոց
զմեքութեան, կարեկցութեան և մարդասիրութեան
և ժամ առաջ նպատակներ ու օգնութիւններ հաս-
ցնել Սասուն-Տաւրիկի արկածեալ և սովեմահ
հայոց, որով յաւել տրախտապարտ կը կայու-
ցանք այդ թշուառներն և զմեզ զամենեւեմ:

Միանք յարգանք արօթաբար՝

Առաջնորդ. տեղագահ Վարդան վարդա-
պետ Յակոբեան, Գովհաննէս վարդապետ
Մարգարէան՝ վանահայր ս. Առաքելոց վա-
նից Մշտ, Վանդ քահանայ Վանդեանց,
Գալու Մերգոյեան՝ քարոզիչ: (Կնիքներ)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, օգոստոսի 6-ին

Խնդրում եմ աղաքիւն ձեր լրագրի մօտակայ
համարներից մէկում, որ ձեր թղթակցի հաղոր-
դած տեղեկութիւնը Ներքին-Գասնից, որ աղա-
վեց «Մշտ» № 72-ի մէջ, իմ հաւաքած տեղե-
կութիւններին նայելով զուրկ է որ և է հիւսից:
Ուսումնասիրական սահմանների վրա ամեն բան
հանգիստ է, ոչ մի քահանայի և ոչ մի հայի չեն
սպանել:

Մուշի թղթակցի հաղորդած տեղեկութիւնը, —

ծաղրվում (ծիծաղ): Պարոններ, ես չէի գոր-
ծածի այս բառերը, եթէ անձնական մեծ փոր-
ձեր ունեցած չը լինէի թիւրքաց կառավարու-
թեան հետ: Ես ասում եմ, նախ լաւ քննեցէր և
որոշեցէ՛ք ձեր գործը, իսկ երբ որոշել էք, աշ-
խատեցէ՛ք, որ նա անպատճառ կատարվի (հաւա-
նութիւն):

«Քերականութիւնը այստեղ կարող է մեզ պէտք
գալ: Ի նկատի ունեցէ՛ք, որ երբ Կ. Պօլսում հնչե-
լու է «կարելի է» խօսքը, նա օգն է ցնդում
և չունի ոչ մի այժ ու կարևորութիւն, իսկ ընդ-
հակառակը, դրա եղբայր կամ քույր համարիչ
«պէտք է» խօսքը կատարելապէս հակացում է
(հասանութիւն): Եւ յայտնի իրողութիւն է, հա-
մարտված դրական փորձերով, որոնց վկայ է
Եւրօպայի քարոզիչը, որ այդ բառի ժամանակին
և խնդրի գործածութիւնը երբեք չէ սխալվել
իր հետեանքների մէջ: (Հասանութիւն):

«Պարոններ, մենք կրիտիկական մի դրու-
թեան ենք հասել: Եւրօպական երեք մեծ պետու-
թիւնները, որոնք կառավարում են աւելիք 200
միլիոն հողի ժողովուրդ, ուր տասն անգամ աւելի
մարդ կայ, քան թիւրքիայում, որոնք քանի ան-
գամ աւելի հարուստ են, քան թիւրքիան, որոնք
մի յիսուն անգամ աւելի ազդեցութիւն են ունե-
ցնում քան թիւրքիան և որոնք միայն ևս ան-
բողջ աշխարհի առաջ այս գործում, եթէ յետ
քաջիկն ուղեւորի և թիւրքաց կառավարութեան
զիմադրութեան առաջ—իսկ ես ասացի, որ մեր
պահանջները պէտք է լինեն իրաւացի—այն ժա-
մանակ նրանք կը խայտառակվեն ամբողջ աշ-
խարհում:

Եթէ միայն այդ տեղեկութիւնը իսկապէս պատ-
կանում է նրան, և տեղական թէպօրտէօրի հա-
րածը չէ,—թիւրքատեաց թղթակցի բորբոքված
երեսկայութեան պատու է:

Թիւրքաց ընդհանուր հիւպատոս՝

Մ. Խասադ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԿՆԵՐ

«Մշտ» խմբագրութիւնը խորին յարգանքով
յայտնում է իր հնորակալութիւնը այն անձանց,
որոնք՝ տիկին Մարիամ Մէլիք-Աղամալեանի մահ-
վան առթիւ, ցաւակցութիւն յայտնեցին մեր
խմբագրութեան:

Տաղաքիւր Մուշի հանգանակիչ մասնաժողովի
նախաձեռնությամբ ենք համարում յայտնել, որ
այժմ փող հանգանակել յօգուտ սովեակների
մենք չենք կարող: Բարձրագոյն թոյլ տալու
թեւում, 1894 թ.ին մենք հանգանակութիւն
բաց արինք թէ տեղացի և թէ թիւրքաց Հա-
յաստանի սովեակների օգտին, և այդ հանգանա-
կութիւնը 1895 թ.ի յունվարին փակվեց: Ուստի
մենք անկարող ենք այժմ, թողնուածին չունե-
նալով, որ և է հանգանակութիւն անել:

Լսում ենք, որ Լևոն Մարգարեան հրաւիրված է
Իբրեւ ռուսացի Մօսկվայի Լազարեան ճեմարանը:
Լազարեան ճեմարանի ուսուցչական խումբը, ի
հարկէ, շատ ուրախ կը լինի, որ գրաւեց զէպի
ինքը մի այնպիսի համակրելի ուժի, ինչպէս է
Լևոն Մարգարեան, որից զրկվեց անցեալ տարի
Հուլիս թեմական դպրոցը, իսկ այս տարի՝ Ներ-
սիսեան դպրոցը: Որքանուր, եռանդուն գործող-
ները շարունակում են հետանալ մեր դպրոցնե-
րից—դա աւելի քան ցաւալի է:

Մեր ծխական դպրոցների ուսուցիչները և
վարժուհիները էլի տագնապի մէջ են: Յու-
նիս, յուլիս և օգոստոս ամիսները իսկապէս
հանգստութեան ամիսներ չեն հայոց դպրոցի
ուսուցչի և ուսուցչուհու համար, այլ տանջանքի
ամիսներ: Տեղից զրկված, անուրջ ապագայով
ենթակայ դպրոցի վարչութիւնների և թեմական
տեսուչների կամայականութեան,—մեր ժողովր-
դական դպրոցների համեստ աշխատանքները
ամբողջ ամառը տանջվում են, մինչև կարողա-
նում են մի տեղ գտնել իրանց համար: Այդ
անվերջ տանջանքներն են, որ մաշում են մեր
ուսուցիչներին և վարժուհիներին ոչ թէ միայն
բարոյապէս, այլ և ֆիզիկապէս:

Այս օրերս թիֆլիս է եկել՝ այստեղից Եւփա-
ծին գնալու նպատակով, Մօսկվայի համալսարա-
նի պրիվատ-դոցէնա Լևոն Մսերեանց: Երիտա-
սարդ լեզուագէտը մտադիր է Եւփաճի գրադա-
նութիւնը:

Խարհում: Պարտաւորութեան իւրաքանչիւր մի
կէտ համապատասխանում է նրա ներքին
էութեան, դուք և իմ լօրդ դուքս, արտասանե-
ցիք մի բառ, որ արտասանեցողը բառ է, դժբաղ-
դաբար ոչ անտեղի այս զէպը, «ջնջում» բառը:
Արդէն ամեն տեղ տարածված է մի ընդհանուր
կարծիք, որ թիւրք կառավարութեան այժմեան
գործողութիւնները Հայաստանում յատկապէս,
բայց ոչ բացառապէս Հայաստանում, ունեն նը-
պատակ ջնջել քրիստոնեաներին այդ պետու-
թեան մէջ:

«Եւ կը ցանկայի, որ ճշմարիտ չը լինէր ասածս,
բայց մի և նոյն ժամանակ պէտք է յայտնել, որ
բոլոր ապացոյցները զէպի այն կողմն են հակվում,
թէ բոլորը ճշմարիտ է (լսեցէ՛ք, լսեցէ՛ք): Եւ ամե-
նամեծ ապացոյցը, որ կարող է վկայել այդ
մասին՝ թիւրք կառավարութեան կատարեալ
խեղճ արուեստն է: Կենս. իմ կենսի մի-
ջոյնի կղան շրջաններ, երբ թիւրքիան կառա-
վարվում էր աշխիւ և ընդունակ անձնաւորու-
թիւններով, մի երեսուն տարի սրանից առաջ,
դուք կարող էիք հաւատալ թիւրքաց կառավա-
րութեան խօսքին, ինչպէս և մի և եւրօպական
կառավարութեան, դուք կարող էիք չը հաւանել
նրանց վարմունքը, բայց կարող էիք հաւատալ
նրանց խօսքին: Սակայն այժմ կարծես վրա է
հասել մի կատարեալ խեղճարութիւն: Ի՞նչ է
կատարվում թիւրքիայում: Մենք ակնատես
ենք այդ կառավարութեան անսպարմութեան,
նրա ինքնադուրբեան խողերին, նա ասում է, թէ
չէ կարող զիջել իր իշխանութիւնը, չէ կարող սահ-
մանափակել իր իրաւունքները: Ի՞նչ են եղել
նրա պետութեան մի երրորդ մասի իրաւունք-
ները: Իմ կենսի միջոցին թիւրքիան կուրցրեց
իր պետութեան մի երրորդ մասը և 16 թէ 18
միլիոն ժողովուրդ, որոնք բնակված էին գեղե-
ցիկ և աշխարհի մէջ երեսն մեծ հոշակ ունե-
ցող երկիրներում, որոնք դուրս եկան օսման-
ների ձեռքից և այժմ ազատ են, ինչպէս մենք
(հասանութիւն): Օսմանեան կառավարութիւնը
հնար լաւ գիտէ այս բոլորը, բայց և այնպէս
մենք տեսնում ենք, ինչպէս նա շարունակում է
իր խեղճար գործերը:

«Միւս կողմից, իմ լօրդ-դոքսը շատ խելացի
կերպով մասնաւոր արեց կառավարութեան այն
ձեռք, որ մտքովեց 1861 թ.ին Լիբանանում, որ-
տեղ տեղական ինքնավարութեան և հասարակա-
կան կոնսորիի մի հաստատութիւն իրագործված
է թիւրքիայում և որի արդիւնքը այնքան բաւա-
րար է: Կա երկրի մի մասն է, թէ և ոչ նշանա-
ւոր մասը, որտեղ տեղական ինքնավարութեան
նման մի բան է հիմնված և ունի շատ յուսալի
ապագայ: Երբ մենք տեսնում ենք մի կող-
մից այս բոլորը, որ հաստատում են արդարա-
դատութեան այս աջող փորձերը, միւս կողմից
նկատում ենք, թէ ինչպէս Յունաստան, Բոլա-
րիս և չորս կամ հինգ ուրիշ պետութիւններ են
կազմվել այդ մեծ պետութիւնից, այն ժամանակ
ևս ասում եմ, որ թիւրքաց կառավարութիւնը
աւելնել կերպով խեղճարութեան վիճակի մէջ
է և որ այդ խեղճարութեան հնարած ծրագիր-
ներից մէկն էլ քրիստոնեաների ջնջելն է թիւր-

քանում մի քանի ուսումնասիրութիւններ կա-
տարել:

Մեզ հաղորդում են, որ թէ թիֆլիսից և թէ
ուրիշ տեղերից մեծ քանակութեամբ մարդիկ են
զիմում թիֆլիս-Կարսի նոր երկաթուղու վար-
չութեան, տեղ և պաշտօն խնդրելով: Կիսովնե-
րի թիւը հարիւրների է հասնում: Վարչութիւնը
արդէն յայտարարել է, որ այլ ևս ազատ տեղեր
չը կան:

Մենք ստացանք այս օրերս թիֆլիսում հրա-
տարված մի գրքոյի, «Համառօտ ցուցմունք-
ներ դասաւորութեան պատրաստողների համար»:
Այդ գրքոյից, որի նպատակն է մի քանի գործ-
նական խորհուրդներ տալ ուսուցիչներին, կաղ-
մել են Ռիպալի ուսումնասիրական շրջանի փորձ-
նական մասնագետի անդամները: Ուսուցիչից
բաւական աջող կերպով թարգմանել է Յ. Սա-
րիկեանց:

ՇՈՒՇՈՒՅՑ մեզ գրում են. «Այստեղ լուր է
տարածվել, որ վեհապետ Կաթողիկոսը օգոստո-
սի վերջերին գալու է Հուշի»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պօլսիս, յուլիսի 25-ին

Խնդրութիւն մը մեզի համար՝ վառայ կուսա-
կալին անկումն է: Այդ ստակալի պաշտօնատա-
րը, որ յաջորդ եղաւ Խալիլ պէյի՝ մեր նախկին
պատրիարքութեան և մեր աղաներուն հնորէիւր,
վանեցոց բոլոր ուժերուն քանդումն եղաւ: Իբրեւ
բիրտ զինուորական, Պօլսեան կուսակցութիւնն
ալ իր ձեռքը հլու գործիք ունենալով, ամեն ա-
ղետը թափեց հակառակ կուսակցութեան վրա,
անիրաւ բռնադատութիւն, անիրաւ աքսորանք,
միմիայն ասանք եղած են իր բոլոր գործառու-
թիւնները, զանց կրննմ կաշառառութիւնները,
որ թիւրք պաշտօնատարներու սովորական մէկ
գործն է արդէն:

Իր անկումը հետեալ զէպերուն կը վերա-
գրուի: Կրնն թէ Շատախի մէկ գիւղը կը
մտնէ քիւրդերու զինեալ խումբ մը ցորեկ ատեն:
Հունձի եղանակ ըլլալով, բնականաբար գիւղը
թափուր կըլլար իր կարեւոր ուժերէն: Քիւրդերը
եկեղեցիներ կը մտնեն և, տարածուած սովորու-
թեան մը համեմատ, ս. հաղորդութիւնը չանը
վիղը կապելով, կը սկսեն իրենց վայրենի հըր-
ճուանքը տօնել: Հինգ վեց շատախից կը բող-
քեն վանի կուսակալին և քիւրդերուն պատժ-
իւր կը խնդրեն:

Իսկ Պահրի-փաշա ոչ միայն իբրեւ գրողարտու-

մասնափակել իր իրաւունքները: Ի՞նչ են եղել
նրա պետութեան մի երրորդ մասի իրաւունք-
ները: Իմ կենսի միջոցին թիւրքիան կուրցրեց
իր պետութեան մի երրորդ մասը և 16 թէ 18
միլիոն ժողովուրդ, որոնք բնակված էին գեղե-
ցիկ և աշխարհի մէջ երեսն մեծ հոշակ ունե-
ցող երկիրներում, որոնք դուրս եկան օսման-
ների ձեռքից և այժմ ազատ են, ինչպէս մենք
(հասանութիւն): Օսմանեան կառավարութիւնը
հնար լաւ գիտէ այս բոլորը, բայց և այնպէս
մենք տեսնում ենք, ինչպէս նա շարունակում է
իր խեղճար գործերը:

«Միւս կողմից, իմ լօրդ-դոքսը շատ խելացի
կերպով մասնաւոր արեց կառավարութեան այն
ձեռք, որ մտքովեց 1861 թ.ին Լիբանանում, որ-
տեղ տեղական ինքնավարութեան և հասարակա-
կան կոնսորիի մի հաստատութիւն իրագործված
է թիւրքիայում և որի արդիւնքը այնքան բաւա-
րար է: Կա երկրի մի մասն է, թէ և ոչ նշանա-
ւոր մասը, որտեղ տեղական ինքնավարութեան
նման մի բան է հիմնված և ունի շատ յուսալի
ապագայ: Երբ մենք տեսնում ենք մի կող-
մից այս բոլորը, որ հաստատում են արդարա-
դատութեան այս աջող փորձերը, միւս կողմից
նկատում ենք, թէ ինչպէս Յունաստան, Բոլա-
րիս և չորս կամ հինգ ուրիշ պետութիւններ են
կազմվել այդ մեծ պետութիւնից, այն ժամանակ
ևս ասում եմ, որ թիւրքաց կառավարութիւնը
աւելնել կերպով խեղճարութեան վիճակի մէջ
է և որ այդ խեղճարութեան հնարած ծրագիր-
ներից մէկն էլ քրիստոնեաների ջնջելն է թիւր-

թիւն կը համարի քիւրդերու մասին պատմու-
ածը, այլ և իբրեւ խաբարներ բռնադատել կու-
տայ մարդիկը: Վանի անգլիական հիւպատոսն
ու Ամերիկայի միսիօնարը մէջ կը մտնեն, և
տեղւոյն վրայ իսկ քննութիւններ կատարելով,
եղելութիւնը կը ստուգեն ու կը գրեն Պօլսիս:
Այսպէս կիսնայ Պահրի-փաշա, և Պօլսիս կախի-
պոսի թեւերը ջուրը կիսնան:

Պղտիկ լուր մըն ալ—վանի մէջ Նալբան-
դեան անունով շեռտակար մարդու մը սպանու-
թիւնն է,—կենսի մը, որ վան կը սկսի
տալ: Իրաւունք չունենք այսպէս գրելու. կէս
դար է, որ եպիսկոպոսի մը վախիտ տակ պաշար-
ված, մաթիւն մէջ կը քրքրեն անոր դէմ. իսկ
ցորեկը խաչ կը հանեն անոր ներկայութեանը:
Նալբանդեանէ առաջ մեկնած էր արդէն Մա-
րութեան անունով մարդ մը, ջերմ Պօլսեան և
շեռտակար գոյութիւն մը, թէ և բնական մահով:

Պահրի-փաշան կիսնայ, Պօլսիս կախիկոսութե-
ւերը կը կախէ թրջած հաւու պէս, և վանեցիք
մեծ շնչատութիւն մը կրնն:

Վարդ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻՍՏԻՑ

Լօնդօն, յուլիսի 29-ին

Այսօր Լօնդօնի լրագիրներում լոյս են տեսել
հետեալ հետաքրքրական նորութիւնները.

«Press-Association»-ը յայտնում է, որ Arme-
nian Relief Fund-ի գանձապահը ստացել է հե-
տեալ հեռագիրը Լօնդ Սօլքեփօրից.

Foreign office.

«Լօնդ Սօլքեփօրի յանձնարարութեամբ ու-
ղարկում եմ ձեզ պատճէնը այն հեռագրի, որ
Երբորմի անգլիական հիւպատոսը ուղարկել է
Պօլսի գեսպանին, յայտնելով, թէ ինչ քայլեր
են արված Սասունի գաւառի հայերին նպատե-
լու գործում, և մի և նոյն ժամանակ ներկայե-
լով մի կտոր մի մասնաւոր նամակից, որ գըր-
ված է Մուշից, յունիսի 24-ից, Տաւրիկի բնակիչ-
ների դրութեան մասին»:

Sanderson.

Ահա հիւպատոս Գրէյվի նամակը՝ ուղղած
Ֆիլիպ Կերրիին.

Երբորմ, 18 յուլիսի

«Պատիւ ունեմ յայտնել ձեզ, որ պ. Հայկա-
րը ինձ տեղեկացրեց, թէ Բէյնօղլու վանից ան-
ցել է Մուշ ամսիս 4-ին. իսկ Շիպլէի հեռա-
գրից ես իմացայ, որ նա հասել է Մուշ հայր
Cole-ի հետ ամսիս 9-ին, և 12-ին էլ այնտեղից
հանապարհվել է զէպի Սասուն: Տեղեկացայ,
որ վերադարձած փախտականների մէջ շատ
հիւանդութիւններ կան, և որ դեռ ևս չառող-
ջացած վերքերը շատ վատ դրութեան մէջ են՝
չգրի պատճառով, այնպէս որ Dr. Reynolds-ի
բժշկական հաստատութեան համար գործելու լայն
քիւլուս: Այո, սա մի տխուր և սարսափելի
պատմութիւն է. ես երկարօրէն այդ պատմե-
ցի, բայց մի կարճ ակոխում ձեր կողմից, իբրեւ
որոշում, կարեւոր է այս գործի համար (հաւա-
նութիւն):

«Ի հարկէ, ես ինքս սաստիկ ցանկանում եմ,
որ թիւրքիան ինքը խուսափի բարդութիւններից
և խեղճ գայ: Երանի թէ այնպիսի մարդիկ,
ինչպէս էին Ֆուրք-փաշան և Ալի-փաշան, որոնք
գործում էին թիւրքիայում Վրիմի պատերազմից
յետոյ, կարողանային գերեզմանից յարութիւն
առնել և ներշնչել թիւրքիայի քաղաքականու-
թեան մէջ իրանց սկզբունքների ոգին:

«Այս է, իմ կարծիքով, այն, ինչ մենք կը ցան-
կանայինք թիւրքիային, փոխանակ նրան տեսնե-
լու բեհաւորված սարսափելի մեղադրանքներով:
Մենք պէտք է հոգանք, որ մեր խնդրածը լինի
այն, ինչ որ իրաւացի է, ինչ որ անհրաժեշտ է:
Մենք պէտք է վճենք, որ Աստուծու օգնութեամբ
այն, ինչ որ անհրաժեշտ է, տրվի, չը նայելով այն
բանին, թէ կարող է դրան հակաճառող լինել,
թէ ոչ: (Բարձրագոյն հաւանութիւն):

Կանոն Մակիլը կրկնեց որոշումը և ասաց,
որ ինքն հաւատացած է, թէ Լօնդ Սօլքեփօրի կը
համադրի, որ Չեռտերի միախնդր ամբացնում է
նրա բաղաւթները այս խնդրում:

Որոշումը ուղեւորութեամբ ընդունվեց:

աստիճանի վրա լինելի պահի հիանալի անցում, որը նաև և պ. Cole-ը շինում էր Ալեքսանդրի մէջ: Այս առիթով էս պատիւ ունեւ կցել մի նամակի կտորի պատճէն, գրված Մուշում յունիսի 24-ին, որի մէջ նկարագրվում են այն զրկանքները, որ դեռ կրում է Տաւրիկի ժողովուրդը, որի գրութիւնը չառ աւելի վատ է, քան ուրիշ սասանացիներին, թէ այն պատճառով, որ նրանք աւելի էին ենթարկված քրդերի յարձակումներին, և թէ այն պատճառով, որ դեռ ոչինչ չէ արված նրանց օգնելու այս ամառվայ աշխատանքների և ցանքերի ժամանակ: Այս նամակը առանձնապէս հետաքրքիր է, որովհետև տալիս է որոշ հաշիւ այն քննադատական մասին, որոնց վրա պէտք է հող տանեն...

Ստորագրած է՝ Graves.

Մի կտոր մասնաւոր նամակից
«Տաւրիկի ժողովուրդի մի խումբ գիւղերից, որոնցից 13-ը այժմ բոլորովին աւերակ են: Ոչ բնակիչներ են մնում, ոչ շինութիւններ, ոչ էլ մի կտոր փայտ: Նախկին բնակիչները թափառում են, վերջին ձմեռը նրանք ապաստան գտան փայտեղ զաւառում, որը պարունակում է 30 գիւղից աւելի, որոնց ամեն մէկի մէջ կայ 20-ից մինչև 150 տուն, այն ինչ շատերը ցրվեցին Վարդգէսի կողմերը:

«Գարնան սկզբներում աւազակ բիրդերը և ուրիշները հաղածանք սկսեցին և զիւրապիւր այն ժամանակ վճռեցին, որ աւելի լաւ է վերադառնալ նորից իրանց անկողն: Այս ամառն փախտաւորներից կան մօտ 860 հոգի, որոնք այժմ ապրում են անտառներում և լեռներում, այրերում և ծառերի մէջ, կիսամերկ և շատերը նոյն իսկ բոլորովին մերկ:

«Հաջ նոքա չէր, կեցել ամիսն ան և բոլի իսկ մաճի մասին նրանք միայն երազում են՝ կերակրվելով խոտով և ծառերի տերեւներով: Երկու տեսակ խոտ կայ, որ գերադասում են, բայց դժբախտ է վերջնում են, որովհետև սկսում են չորանալ: Այսպիսի կերակրով ապրելով նրանք հիւանդացել են, նրանց դէմքեր գոյնը դեղին է, նրանք ուժաւորւում են եղիկ, ինչպէս են և տենդը աստիճան տարածված է նրանց մէջ: Պետքս Զուրու (Վերին Տաւրիկից) ունէր երկու կարպետ և մի սղոնձէ աման, իսկ Համզա Գաման (Հոսմոնից) ունէր երկու հրացան: Այդ բոլորը վաճառեցին և ալիւր գնեցին անցնալ ձմեռը: Բայց միւսները մնում էին կարօտ, չունենալով ոչ մի իրեղէն, բացի մի քանի հրացաններից:

«Կայ աւելի քան 5000 սասանացի, թշուառ և բոլորովին քաղցած: Մօտ մի հինգերորդ մասը այժմ տեղաւորված են ժամանակաւոր անկողնում: Որպէս զի կարելի չէր նրանց ամեն մէկին օրական մի կտոր չոր հաց տալ, հարկաւոր է ամեն օր 24 շիւլիկ: Մենք աշխատում ենք օգնել նրանց և տալ միջոց ցանկելու իրանց արտերի մի մասը գոնէ:»

Այս նամակը տրված է բոլոր լրագիրներում: Բացի գրանից հետեւալ հեռագիրներ են տրվողովել Լժնդոնի պատրվայ լրագիրներում:

Կ. ՊՕԼԻՍ, օգոստոսի 8-ին (Բէյքոթ)

«Հնարհիւ վերջին լրտեսի սպանութեան, բազմաթիւ հայեր այստեղ և շրջակայքում բանտարկված են:»

Կ. ՊՕԼԻՍ, օգոստոսի 8-ին

«Տարտուսի (Ալեքսանդրի վիլայէթ) հասած տեղեկութիւնները հաստատում են, որ ամբողջ յարձակվել է այնտեղի ամերիկական միսիօնարների կողմից վրա, նեղութիւն է տուել մի քանի ուսանողների և սպանացի է միսիօնարներին: Մանրամասնութիւնները դեռ ևս յայտնի չեն:»

Յ. Բ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅՑ

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 7 օգոստոսի: Օգոստոսի 6-ին, աւստրիական կայսրի ծննդեան օրը, պետերբուրգեան մեծ պալատում, Բարձրագոյն ներկայութեամբ, տեղի ունեցաւ ճաշ: Աւստրիական դեսպան ճաշի նստած էր թագուհի կայսրուհու աջ կողմը: Թագաւոր կայսրը իրանց աւստրիական կայսրի կենացը:

ԲԵՐԼԻՆ, 6 օգոստոսի: Բէլգրադից հաղորդում են «Կէօզի» լրագրին: «Միսիօնար-նախագահ Նովակովիչ խնդրեց միաբանութիւն Միսիօնարներին»

հաղորդել ուսանող զեկաւարդ չրջաններին, որ այժմեան կառավարութիւնը ոչինչ կապ չունի արտաքին քաղաքականութեան այն ուղղութեան հետ, որին հետեւում էր Միլան թագաւորը: Սերբիական միսիօնարները զեպի Ռուսաստանը տանում է սիրոյ, յարգանքի և երախտագիտութեան անկեղծ զգացմունքներ, որոնցով համակրված են բոլոր սերբերը: Նովակովիչ կրկնեց այդ խօսքերը ուսանող զեկաւարդին:

ԲԵՐԼԻՆ, 7 օգոստոսի: Երէկ երեկոյեան կարճատեւ, բայց բաւական զօրեղ երկրաշարժ տեղի ունեցաւ:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 8 օգոստոսի: Թագաւոր կայսրը և թագուհի կայսրուհին բարեհաճեցին գնալ Պետերբուրգից Յարսկոյէ—Սելո:

«НОВОСТИ» լրագրին Բէլգրադից հեռագրում են, որ արմատականները ցայցեր արին արքայից վերադարձող Տաւլանովիչին: Նա պատասխանեց մի ճառով, որի մէջ, ի միջի այլոց, ասեց. «Սրբաւարականները հաւատարիմ են թագաւորին և կը յաղթեն բոլոր ուրիշ կուսակցութիւններին:»

ԼՕՆԻՍՆ, 8 օգոստոսի: Լորդերի ժողովում յայտարարված է, որ Ամերիկի դուքսը թողնում է անգլիական զօրքերի հրամանատարի պաշտօնը: Ամերիկի դուքսը կը փոխարինի Լորդ Օուլսէյ:

Խմբագիր և հրատարակիչ՝
ԱԼԵԿՍԱՆԴՐ ԲԱՆԱՆԻՍ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա Ջ Դ

Առաջնայի կարգադրեան ուսումնարանի 50-ամեայ և օրորդաց կոնսպեկտն ուսումնարանի 25-ամեայ պատմութիւնը գրելու համար, հոգաբարձութեան առաջարկութեամբ, մայիսի 12-ին գումարված երկու սեռի ուսումնարաններին խառն մանկավարժական ժողովում ընտրված մասնագիտովի ներքոյ ստորագրեալ անդեմներս, ի նկատի ունենալով կարգադրեան ուսումնարանի հիմնարկութեան և յետագայ տարիների գործերի բացակայութիւնը, սրանով խոնարհաբար խնդրում ենք այն բոլոր անձանց, մասնաւոր նրանց, որոնք մօտ յարաբերութիւն են ունեցել կարգադրեան ուսումնարանի հիմնադիր, երջանկալի-չառակ կարգադետ արքեպիսկոպոսի հետ, բարեհաճեն շուտաւրջով ուղարկել մեզ իրանց մօտ գտնված՝ այստեղի ուսումնարաններին վերաբերեալ կամ հարաւոր պատճէնը:

Ուղարկվելիք նիւթերը հնորակաւորութեամբ կընդունի մասնագիտովի և իր համար սեպուհ պարտք կը համարի նիւթ ուղարկողների անունը ուսումնարանների պատմութեան մէջ արձանագրելու:

Նիւթերն ուղարկել այս հասցեով՝ АХАЛЦХԻՄ Попечительству армянскихъ училищъ. Մասնագիտովի անդամներ՝
Մ. Բիրքեւեանց
Ար. Առաքելեանց
Ս. Տէր-Կարապետեանց
1—3

Ա Ր Գ Վ Ի Ն Ի

ՀԱՅ-ԿԱԹՈՒԿԱՅՑ ՈՒՍՈՒՄԱՐԱՆՆԵՐԻ Համար հարկաւոր են՝ ԵՐԿՈՒ ՌՈՍՈՒՅԻՑ ԵՆ ԵՐԿՈՒ ՎԱՐԺՈՒՀԻ, ցենզաւորներ, ուսանող և հայոց լեզուներ: Ցանկալի է, որ լինէին ամուսններ:

Գրեւել պայմաններով՝ АРТВИНЪ, ЯКО-ВУ ПИЛОЯНУ.
(№ 90) 1—6

Արդէն ձեռնարկել եմ թարգմանելու ուսմանից Մանուկագոյցի «СЧАСТЬЕ и ТРУДЪ» աշխատութիւնը: Ցայտնում եմ այս ի դիտութիւն հայ թարգմանիչներին:

1—1 Աւուսիչ՝ Գ. Աղաջանեան

ԹԻՖԼԻՍՈՒՄ, «ՎԵՐՍԱՅԼ» ՀԻՄՆԱՆՈՅՈՒՄ
կազմ միջոցին,

Ինձանից գողացել են ԽԱՂԱՏՈՒՄՍԵՐ, առաջին խաղարկութեան 07701/26, երկրորդ—11482/8: Գտնաւոր կամ տեղից ցոյց տուողը կը ստանայ 100 ռուբլի վարձատրութիւն:

Հասցէ՝ Эривань, Александру Аюбянцъ.
(№ 86) 2—3

ԲԺՇԿԱՊԵՏ ԱԻՆՏԻԲ ԲԱՐԱՅԵԱՆԻ
բացակայութեան պատճառով

ՋՐԱ-ԷԼԷԳԻՏՐԱԿԱՆ
ԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ

(Սօլոյակ, Սերգիեվսկի փողոց, № 14)

Ամառվայ ընթացքում հիւանդներին կընդունի

ԲԺՇԿԱՊԵՏ

ՍԱՄՈՒԷԼ ՇԱՀԱՐԱՐՆԵԱՆՑ

կանանց և ջղային հիւանդութիւններին

Ամեն օր, 1—2 ժ. ցերեկվայ և 7 ժամ երեկոյեան

Բուժարանում բացի էլէքտրական վանաներից, գուշերից, բժշկական մարմանարդութիւնից—կին հիւանդներին մասով, որի համար ընդունելութեան ժամերին սերկայ են լինում կին և տղամարդ մասով: Ժամանակ—մասով ԽՈՐՈՎԱՆՑ և կին մասով ԿՐԱՆՎԱՆՑ:
(№ 71) 14—30

ՎԱՃԱՎՈՐՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՆԵԱՍ ԳՐԲԵՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՒՍ—10 հառը 50 Կ.
ԵԱՆԿՈ ԵՐԱԺԵՏԸ—10 20 Կ.
Գիմէ կարելի է՝ 30Ի Տէր-Միքայիլեանցին
Тифлисъ, Большая Кривая № 3.
(№ 89) 3—6

ՄԵԲՈՒՐ ԽԻՆԻՆ, ԾԾՄԲԸ-ԱՂԱԹԹՈՒ

Կատարեալ հնարաւորութիւն է տրվում ձեռք բերել իւրաքանչիւր տան մէջ այդ անհրաժեշտ բոժիչ միջոցը ամենաէփան գնով, բոլոր նշանաւոր առեւտրականների մօտ գաւառներում:

Բ. ԿԵՕԼԷՐ ԵՆ ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ձիշէ երաշխաւորութեամբ՝ պրէպարատների քիմիական մաքրութեան համար: Անպատճառ պայմանը՝ պահանջել իւրաքանչիւր ապակեայ սրուակի վրա՝ ընկերութեան ֆիրմայի նշանով և գրաւմով, չը փչացած մետաղաթիւի ցանցիկ ընկերութեան (Բ. Կ. և ԸՆԿ.) պլանով:
(№ 90) 1—2

ԿՐԱԿԻ ԴԷՄ ՓՈՒՍԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԻՓԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ
Ապահովագրում է ամեն տեսակ շինութիւններ թիֆլիս քաղաքի մէջ

ՏԷԼԷՖՈՆ № 288
Վարչութիւնը գտնվում է քաղաքային տանը, Երևանեան հրապարակի վրա, և բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 2 1/2-ը կէս օրից յետոյ:
Մուտքը Վէրվաժինովսկայա փողոցից, քաղաքային դռնայի պրէպարով:
(№ 90) 1—20

ԿԵՕԼԷՐԵԱՆ ՔԱՅԱԽԱՅԻՆ ԷՍԷՆՑԻԱ

Ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈՂՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:

Շնորհիւ
ՔԱՅԱԽԱՅԻՆ ԷՍԷՆՑԻԱՅԻ
յայտնի լաւ յատկութեան և նրա անկասկածելի առաւելութեանը բոլոր ուրիշներից, նրա սպառումը, տատիճանաբար աճելով, հասաւ անցնալ տարի

500,000 ՅԼԱԿՈՆՆԵՐԻ
և այդ հնարաւորութիւն առեւց ընկերութեանը պակասեցնել նրա գինը:
Սակայն էփան գներ տաջարկում են և նմանողներից շատերը, բայց անհրաժեշտ է զիտնել, որ նրանք իրանց հիմք ունեն ոչ թէ ահագին սպառումը և բնականաբար այդ դէպքում ապրանքի հնարաւոր էփանացումը, այլ միայն ստիպված լինելով մրցել խառնում են ջուր և էսէնցիայի համը այնքան նուրբ չէ լինում:
(№ 70) 2—2

ՄԵԻ ԵՒ ՍՊԻՏԱԿ ՊՂՊԵՂ

աղած, մաղող խուփ ունեցող թիթեղեայ տուփերում, նոյնպէս և թրաշ սրուակներում սեղանի համար, 1/32-ից մինչև 1 ֆունտ:

Բ. ԿԵՕԼԷՐ և ԸՆԿ. ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
Ընկերութեան գործարանի աղուցքը ծախվում է ԱՄԵՆ ՏԵՂ, ԲՈՂՈՐ նշանաւոր առեւտրականների մօտ:

Աղած պղպեղին խառնուրդ անելը այնպիսի սովորական երեւոյթ է և այնքան չափից անց են կացրել, որ պատրաստ աղած պղպեղ յաճախ աւելի էփան է ծախվում, քան ոչ աղած, ամբողջ պղպեղը: Իսկ Բ. ԿԵՕԼԷՐ և ԸՆԿ. Ընկերութեան նշանը, ինչպէս բոլորին յայտնի է, ամենաձիշէ գրաւական է ապրանքի լաւ յատկութեան համար:
(№ 71) 2—2